ԹԱՄԱՆՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՎԻԶԻԱՅԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՈՒՂԻՆ

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Մ. ՀԱԿՈԲՅԱՆ

Սովետական Միության բոլոր ժողովուրդների հետ միասին հայ ժողովուրդը նույնպես ակտիվ մասնակցություն ունեցավ Հայրենական մեծ պատերազմին։ Նա ռազմաճակատ ուղարկեց իր տասնյակ հազարավոր զավակներին։ Ստեղծվեցին հայկական հինգ դիվիզիաներ, որոնք բոլորն էլ իրենց դրոշները մարտական փառքով օծեցին ռազմաճակատներում։ Թշնամու դեմ մարտնչող կարմիր բանակին օգնելու համար թիկունքում քրտնաջան աշխատանք էին կատարում Հայաստանի բանվոր դասակարգը, կոլտնտեսային գյուղացիությունը և մտավորականությունը։

Հայ ռազմիկներին կարելի էր հանդիպել պատերազմի բոլոր ռազմաճակատներում, զորքերի բոլոր տեսակների մեջ։ Նրանք հերոսությամբ և անձնազոհությամբ պաշտպանում էին սովետական հայրենիքը։ Ֆաշիզմի դեմ մղվող պայքարում հայ ժողովրդի ակտիվ մասնակցությունն ընդհանուր ճանաչման և բարձր գնահատականի արժանացավ պատերազմի առաջին իսկ ամիսներին։ «Հայ ժողովուրդը Սովետական Միության ազատագրական պայքարի մարտակից մասնակիցն է» առաջնորդող հոդվածում 1941 թ. օգոստոսի 25-ին «Պրավդա»-ն գրել է. «Հայ ժողովուրդը հաստատապես իր մարտական տեղն է գրավել իրենց անկախության և ազատության համար Սովետական Միության բոլոր Ժողովուրդների մղած ընդհանուր պայքարում։ Անվեհեր մարտիկներ օդաչու Դազազյանի, մայոր Ապրեսյանի և հայ ժողովրդի ուրիշ շատ զավակների պանծալի անունները, մարտիկներ, որոնք հռչակվեցին Հայրենական պատերազմի ճակատներում իրենց ցուցաբերած անձնուրաց անվեհերությամբ և արիությամբ,—հայտնի են ամբողջ Սովետական Միությանը»։

Ռազմաճակատում հայ ժողովրդի զավակներից աճեցին բազմաթիվ տաղանդավոր զորահրամանատարներ՝ Սովետական Միության մարշալ Ի. Ք. Բագրամյանը, նավատորմի ադմիրալ Ի. Ս. Իսակովը, ավիացիայի մարշալ Ա. Ա. Խուդյակովը (Ա. Ա. Խանֆերյան), 60-ից ավել գեներալներ՝ գեներալ-գնդապետ Հ. Խ. Բաբաջանյանը, Հրետանու գեներալ-գնդապետ Մ. Ա. Պարսեղովը, գեներալներ Ս. Թ. Գալաջևը, Բ. Ի. Առուշանյանը, Ս. Ս. Մարտիրոսյանը, Գ. Տ. Տեր-Գասպարյանը, Ն. Գ. Սաֆարյանը, Ա. Գ. Կարապետյանը, Հ. Հ. Մարտիրոսյանը և շատ ուրիշներ։

Պատերազմում ցուցաբերած սխրագործությունների համար հայ ժողովրդի քաջարի զավակներից 96-ը արժանացան Սովետական Միության Հերոսի բարձր կոչման, մոտ 70 հազար ռազմիկներ պարգևատրվեցին մարտական շքանշաններով ու մեդալներով։ Թիկունքի աշխատավորներից ավելի քան 376 հազար մարդ պարգևատրվեց «Կովկասի պաշտպանության» և «1941—1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում աշխատանքային արիության համար» մեդալներով։

Բարձր գնահատելով հայ ժողովրդի մասնակցությունը 1941—1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում, ՍՄԿՊ Կենտրոնական կոմիտեն և ՍՍՌՄ Ժողովրդական Կոմիսարների սովետը 1945 թ. նոյեմբերին նշել են, որ «...Հայրենական պատերազմի տարիներին հայ ժողովուրդը պատվով կատարեց իր պարտքը հայրենիքի հանդեպ։ Հայ ռազմիկները, Սովետական Միության մյուս ժողովուրդների զավակների հետ միասին, անձնվիրաբար պաշտպանում էին մեր հայրենիքի ազատությունը և անկախությունը։ Հայաստանի բանվորները, կոլտնտեսականները և ինտելիգենցիան անդուլ կերպով աշխատում էին թշնամու դեմ հաղթանակ նվաճելու համար» («Սովետական Հայաստան», 25 նոյեմբերի, 1945)։

* * *

Հայրենական պատերազմում մեծ սխրանքներ է կատարել եռակի շքանշանակիր Թամանյան 89-րդ հայկական հրաձգային դիվիզիան, որը փառավոր մարտական ուղի է անցել Կովկասյան լեռներից մինչև Բեռլին—Էլբա։

Հայկական հրաձգային դիվիզիան ձևավորվեց 1941 թվականի վերջերին։ Կարճ ժամանակամիջոցում այն համալրվեց լավագույն սպայական և շարքային կադրերով։ Հայաստանի կոմպարտիայի Կենտկոմն այնտեղ ուղարկեց բազմաթիվ պարտիական աշխատողներ, որոնք շարային սպայական կազմի հետ միասին մեծ աշխատանք ծավալեցին դիվիզիայի անձնակազմի մարտական և քաղաքական ուսուցման կազմակերպման համար։ Դիվիզիայի առաջին հրամանատար նշանակվեց գնդապետ Սիմյոն Զաքյանը, որը, սակայն, շուտով փոխադրվեց Ղրիմի ռազմաճակատ՝ ստանձնելով այնտեղ ձևավորվող 390-րդ հայկական դիվիզիայի հրամանատարությունը, իսկ նրա փոխարեն 89-րդ հայկական դիվիզիայի հրամանատար նշանակվեց փոխգնդապետ Անդրանիկ Սարգսյանը։ Դիվիզիայի անձնակազմի մոտ երեք քառորդը կոմունիստներ և կոմերիտականներ էին։

Դիվիզիային խնդիր էր տրված կարճ ժամանակամիջոցում նախապատրաստվել ռազմաճակատ մեկնելու համար։ Այդ խնդիրը իրագործվեց հաջողությամբ։ 1942 թ. ամռանը դիվիզիան արդեն լիովին պատրաստ էր մեկնելու։ Այդ ժամանակ հատկապես հարավային ռազմաճակատում և հյուսիսային Կովկասում մեր զորքերի համար դրությունը բավականին բարդացել էր։ Դեռևս ապրիլ-մայիսին Ղրիմում թշնամու բանակները հարձակման էին անցել և առաջ շարժվելով, մտել էին Թաման, օգոստոսին գրավել Նովոռոսիյսկը և Կուբանը։ Ռոստովի շրջանում հարձակման անցած ֆաշիստական զորքերը ճեղքել էին ռազմաճակատի գիծը և մեծ կորուստների գնով հասել Ստալինգրադի մատույցները։ Հյուսիսային Կովկասում նրանք մոտեցել էին Գրոզնուն։ Համառ դիմադրություն ցույց տալով, օգոստոսին կարմիր բանակը կանգնեցրել էր թշնամու առաջխաղացումը։

Կարմիր բանակի գերագույն գլխավոր հրամանատարությունը միջոցառումներ էր մշակում հակահարձակման անցնելու և թշնամուն հետ շպրտելու համար, այդ նպատակով նոր զորամասեր ու ռազմական տեխնիկա կենտրոնացնելով ռազմաճակատներում, այդ թվում նաև անդրկովկասյան ռազմաճակատում։ Երկրամասի բնակչությունը բոլոր ուժերով ու միջոցներով օգնում էր Կարմիր բանակին։ 1942 թ. օգոստոսի վերջերին Թբիլիսիում կայացած Անդրր-

կովկասի ժողովուրդների հակաֆաշիստական միտինգը վերածվեց ժողովուրդների բարեկամության հզոր ցույցի։

Ահա այդ ծանր օրերին ռազմաճակատ մեկնեց նաև 89-րդ հրաձգային դիվիզիան և օգոստոսին դիրքեր գրավեց Գրոզնու մատույցներում, ապա մարտերի մեջ մտավ Մալգոբեկ քաղաքի մոտ։ Այստեղ դիվիզիայի նոր հրամանատար նշանակվեց գնդապետ Արտաշես Վասիլյանը։

Ռազմաճակատի մյուս զորամասերի հետ միասին դիվիզիան այստեղ երկու և կես ամիս ծանր պաշտպանական մարտեր մղեց, բազմիցս հետ շպրտելով թշնամու տանկերի և հետևակի գրոհները, մեծ կորուստներ պատճառելով նրան։ ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ Մ. Ի. Կալինինը «Ճակատամարտ Կովկասի համար» հոդվածում այդ օրերին գրել է. «Կարմիր բանակի մարտակարգերում գտնվող վրացական, ադրբեջանական և հայկական զորամասերը դաժան հարվածներ են հասցնում ֆաշիստական զորքերին» («Զարյա Վոստոկա», 31 հոկտեմբերի 1942 թ.)։

Կովկասյան նախալեռներում 89-րդ դիվիզիան ստացավ իր առաջին մարտական մկրտությունը։ Նրա բոլոր զորամասերը ցույց տվեցին, որ լիովին մարտունակ են և կարող են իրագործել ռազմական դժվարին խնդիրներ։ Այդ մարտերում իրենց քաջագործություններով աչքի ընկան բազմաթիվ հրամանատարներ, քաղաշխատողներ, սերժանտներ ու շարքայիններ։

1943 թվականը սկսվեց ռազմաճակատում կարմիր բանակի ձեռք բերած խոշոր հաղթանակներով, որոնք գնալով ավելի ու ավելի ծավալվում էին։ Դեռևս 1942 թ. նոյեմբերի կեսերին հարձակման անցնելով, մեր զորքերը Ստալինգրադի ռազմաճակատում փայլուն հաջողությունների էին հասել։ Նրանք շրջապատել և ոչնչացրել էին թշնամու 300 հազարանոց բանակը, հաջողությամբ առաջ էին շարժվում դեպի արևմուտք։ Հայրենական պատերազմում սկսվել էր բեկման շրջանը։ Ստալինգրադի ռազմաճակատի հետ միասին հարձակման էին անցել նաև մի շարք այլ ռազմաճակատների զորքեր, այդ թվում Անդրկովկասյան ռազմաճակատի զորքերը։ Այստեղ հարձակումն սկսվեց 1943 թ. հունվարի առաջին օրերին։

Հարձակվող զորքերի առաջին մարտակարգերում էր 89-րդ դիվիզիան։ Սրընթաց գրոհով հետ շպրտելով թշնամուն, հարձակման առաջին օրը նա ազատագրեց Մալգոբեկ քաղաքը։ Ռազմաճակատի մյուս զորամասերի հետ միասին շարունակելով նահանջող թշնամու հետապնդումը, Հյուսիսային Կովկասում նա ազատագրեց տասնյակ բնակելի վայրեր ու հազարավոր սովետական քաղաքացիների։

Ձմեռային դժվարին պայմաններում օրական անցնելով 35—40 կիլոմետր, փետրվարի սկզբներին դիվիզիայի զորամասերը արդեն մոտեցել էին Ազովի ծովի ափերին։ Այստեղ նրանց մարտական նոր խնդիր տրվեց՝ օգնել հարևան միավորմանը, որը ծանր կացության մեջ էր ընկել Նովո-Ջերիլևկա և Պոտի բնակավայրերի շրջանում։ Դիվիզիայի զորամասերն անցնում են այդ խնդրի կատարմանը։ Թշնամին, որի փախուստի ուղիները փակվել էին, խուսափելու դիվիզիայի գլխավոր ուժերի հետ ճակատամարտ տալուց։ Նովո-Ջերիլևկա բնակավայրի մոտ գտնվող անտառաշերտերում դարան մտնելով, նա հարմար պահի էր սպասում փախուստի ճանապարհ բաց անելու համար։ Այդ նպատակով նա հետախուզում էր մեր մարտակարգերի թույլ տեղերը։ Այդ թույլ տեղը թշնամին գտավ 89-րդ դիվիզիայի 390-րդ գնդի հատվածում։ Փետրը-

վարի 9-ի երեկոյան հասնելով Նովո-Ջերիլեկա բնակավայրը, գունդը, որի հետ էր նաև դիվիզիայի հրամանատար գնդապետ Ա. Վասիլյանը, առանց անհրաժեշտ հետախուզության և պահակային պաշտպանության, անցնում է հանգստի։

Դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Նվեր Սաֆարյան

Գնդի և դիվիզիայի հրամանատարության այդ սխալը չի վրիպում թշնամու աչքից։ Գիշերային հետախուզության ընթացքում պարզելով, որ գնդի ստորաբաժանումները հանգստանում են առանց մարտակարգերի և առանց անհրաժեշտ հսկողության, լուսադեմին ֆաշիստական տանկային և մոտո-մեքենայացված գերազանց ուժերը գրոհում են գնդի վրա և մտնում գյուղ։ Հանկարծակիի եկած մեր ստորաբաժանումները մարտական վիճակ ընդունեցին այն ժամանակ, երբ թշնամին արդեն գյուղում էր։ Տեղի ունեցավ կարճատև, բայց կատաղի մարտ։ Գերակշռությունը հակառակորդի կողմն էր։ Ծանր վիճակի մեջ ընկած գնդին օգնության հասան դիվիզիայի 400-րդ և 526-րդ հրաձգային և 531-րդ հրետանային գնդերը։ Հակառակորդի զորամասերը հետ քաշվեցին, տալով զգալի կորուստներ։ Այդ մարտում հերոսաբար ընկան դիվիզիայի հրամանատար գնդապետ Ա. Վասիլյանը, գնդի հրամանատար մայոր Իսախանյանը, դիվիզիայի քաղբաժնի պետի տեղակալ մայոր Կիրակոսյանը, 400-րդ գնդի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ մայոր Ս. Բագդասարյանը, մարտկոցի հրամանատար Դանիլինը և ուրիշներ։

1943 թ. գարնանը 89-րդ դիվիզիան կենտրոնացել էր Ցյսկ քաղաքի շրջանում։ Պաշտպանական դիրքեր գրավելով Ագովի ծովի ափերին, նա միաժամանակ ձեռնամուխ եղավ մարտական ու քաղաքական ուսուցման, նախապատրաստվելով հետագա մարտերին։ Այդ ժամանակ դիվիզիայի նոր հրամանատար նշանակվեց գնդապետ Նվեր Սաֆարյանը։ Ամրապնդվեց նաև գրն-

դերի և մի շարք ստորաբաժանումների հրամանատարությունը։ Դիվիզիան ստացավ նոր համալրում և կարճ ժամանակամիջոցում բարձր ցուցանիշների հասավ մարտական ու քաղաքական ուսուցման բնագավառում։ Այդ գործում մոբիլիզացնող կարևոր դեր կատարեց հայ ժողովրդի նշանավոր նամակը ռազմաճակատում գտնվող իր զավակներին, որը մամուլում հրապարակվեց 1943 թ. փետրվարի վերջերին։

1943 թ. օգոստոսին դիվիզիան խնդիր ստացավ մարտական դիրքեր գրավել Նովոռոսիյսկից հյուսիս-արևելք։ Այդ ժամանակ ուժեղ մարտեր էին գնում Նովոռոսիյսկի և Թամանյան թերակղզու ազատագրման համար։ Ստեղծելով բազմաշերտ ամուր պաշտպանական գիծ, հակառակորդը բոլոր ուժերով ձգտում էր այն պահել իր ձեռքում՝ որպես կարևորագույն ստրատեգիական հենակետ։

Հունան Ավետիսյան

Ջահան Կարախանյան

Սուրեն Առաքելյան

89-րդ դիվիզիան հարձակումը պետք է ծավալեր Դոլգայա և Սախարնայա Գոլովկա լեռների ուղղությամբ, խնդիր ունենալով ճեղքել թշնամու պաշտպանության գիծը և առաջ ընթանալ դեպի Թաման։ Ռազմաճակատի մյուս զորքերի հետ միասին սեպտեմբերի 6-ին սկսելով գրոհը, դիվիզիայի զորամասերը հանդիպեցին թշնամու ուժեղ դիմադրությանը։ Մավալվեցին կատաղի մարտեր։ 400-րդ գունդը (հրամանատար՝ փոխգնդապետ Պեշչանսկի) տիրապետեց Սախարնայա Գոլովկայի հարավ-արևելյան մասին, իսկ 390-րդ գունդը (հրամանատար՝ փոխգնդապետ Ե. Կարապետյան), շրջանցելով այդ լեռը, սկսեց Դոլգայա լեռան գրոհը։ Այստեղ էլ հայ ժողովրդի պանծալի զավակ ավագ սերժանտ Հունան Ավետիսյանը կատարեց իր սխրանքը. նա իր կյանքի գնով խափանեց թշնամու գնդացրային կրակակետը և ապահովեց ստորաբաժանման առաջընթացը։ Կուրրատսկայա ստանիցայի համար մղված մարտում նույնպիսի սխրագործություն կատարեց ավագ սերժանտ Սուրեն Առաքելյանը։ Սակրավոր Ջահան Կարախանյանը իր մտածված, համարձակ ու անձնուրաց գործողությունների շնորհիվ ականազերծեց առաջ շարժվող մեր զորամասերի ուղիները, Նովոռոսիյսկի մատույցներում պայթյունից փրկեց կարևորագույն

նշանակություն ունեցող մի կամուրջ։ Այդ քաջագործությունների համար Հ. Ավետիսյանը և Ս. Առաքելյանը հետմահու արժանացան Սովետական Միության հերոսի բարձր կոչման, իսկ Ջ. Կարախանյանը, որը նույնպես ներկայացված էր Սովետական Միության հերոսի կոչման, զոհվեց Կերչում՝ նախքան ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրի հրապարակումը։ Նրանք 89-րդ դիվիզիայի առաջին հերոսներն էին, նրա առաջին պարծանքները։

Սեպտեմբերի 18-ին դիվիզիան ազատագրեց Վերխնե-Բականսկ շրջանային կենտրոնը և 5000 սովետական քաղաքացիների։ Այս մարտում առանձնապես աչքի ընկավ 526-րդ գունդը (հրամանատար՝ փոխգնդապետ Ռ. Հակոբյան, որը ծանր վիրավորվեց)։ Թամանում դիվիզիան ազատագրեց տասնյակ բնակավայրեր, իսկ հոկտեմբերի 3-ին 390-րդ գունդը մտավ Թաման քաղաքը։ Ռազմաճակատի զորքերը հոկտեմբերի 9-ին Թամանյան թերակղզին ամբողջապես ազատագրեցին թշնամուց։ Ռ թիվս մարտերում աչքի ընկած մյուս դիվիզիաների, գերագույն գլխավոր հրամանատարության հրամանով «Թամանյան» կոչման արժանացավ նաև հայկական 89-րդ դիվիզիան։

Թամանի ազատագրման համար մղված մարտերում ցուցաբերած քաջագործությունների համար դիվիզիայի անձնակազմից 4099 մարդ պարգևատրվեց Սովետական Միության շքանշաններով ու մեդալներով։

Թամանում ձեռք բերած պատմական հաղթանակի առթիվ դիվիզիայի անձնակազմը նամակ-զեկուցագիր գրեց Հայաստանի աշխատավորությանը. «...Մենք երդվեցինք պատասխանել ձեր նամակին հերոսական սխրագործություններով, բոլշևիկյան գործերով, ամենալավ պատասխանով, որը դուք սպասում էիք մեզանից։ Եվ այսօր մենք հպարտությամբ ամփոփելով մեր 7 ամսվա մարտական գործողությունների արդյունքը՝ խնդությամբ զեկուցում ենք ձեզ այն մասին, թե ինչպես գնդապետ Սաֆարյանի դիվիզիայի հայ ռազմիկները. կենսագործելով ձեր նակազը՝ կատարեցին իրենց պարտքը Սովետական Միության հանդեպ, հայրենիքի հանդեպ» («Կարմիր զինվոր», 21 հոկտեմբերի, 1943)։ Միաժամանակ դիվիզիայի ռազմիկները խոստացան հետագա մարտերում հասնել ավելի մեծ հաջողությունների։

Թամանի ազատագրումից և կարճատև դադարից հետո դիվիզիան պատրաստվում էր Կերչի դեսանտային գործողությանը։ Նրա ամբողջ անձնակազմը խորապես զգում էր այդ խնդրի մեծ կարևորությունը և նրա իրականացման հետ կապված հսկայական դժվարությունները։ Մինչև այդ մեր զորքերը մեծ կորուստներ կրելով երկու անգամ (1941 թ. և 1942 թ. գարնանը), թողել էին Ղրիմի թերակղզին։ Անհրաժեշտ էր այժմ այնտեղ այնպես ամրանալ ու պայքարել, որ չկրկնվեին նախորդ անհաջողությունները, մանավանդ, որ Ղրիմը հատկապես այդ ժամանակ հանդիսանում էր ռազմաճակատի ամենակարևոր ու վճռական հատվածներից մեկը։ Զգալով այդ, թշնամին խոշոր ուժեր էր կուտակել այնտեղ և պատրաստվում էր մեծ ճակատամարտերի։

1943 թ. նոյեմբերի սկզբին ռազմաճակատի զորքերը, հրանոթային հզոր նախապատրաստությունից հետո, հաջողությամբ դեսանտ իջեցրին Կերչի մոտ և նրանից հարավ։ Ջենքի բոլոր տեսակներով զինված հակառակորդը կատաղաբար դիմադրում էր։ Յուրաքանչյուր մետր հողի համար ծանր մարտ էր գնում։ Հաղթահարելով թշնամու դիմադրությունը, դեսանտայինները աստիճանաբար ընդլայնում և ամրապնդում էին փոքրիկ պլացդարմը։

Կերչի շրջակայքում շուտով դեսանտ իջավ նաև 89-րդ դիվիզիան։ Ամրանալով քաղաքի արևելյան կողմում, Առանձին Մերձծովյան բանակի զորամասերի հետ միասին, բանակ, որի հրամանատարն էր սկզբում գեներալ-գնդապետ Պետրովը, ապա բանակի գեներալ Երյոմենկոն, հայկական դիվիզիան մինչև 1944 թ. ապրիլի 10-ը պահեց պլացդարմը, աստիճանաբար ընդարձակեց ու ամրապնդեց այն, ա՛հրաժեշտ պայմաններ ստեղծելով նոր հարձակման համար։

Կերչում դիվիզիան բազմիցս հետ շպրտեց ֆաշիստների գրոհները, ինքը անցավ հակագրոհի և ծանր կորուստներ պատճառեց թշնամուն։ 1944 թ. հունվարին նա մարտերով թափանցեց Կերչ քաղաքը, ազատագրեց նրա կեսը և զգալի չափով ընդարձակեց պլացդարմը։ Գերագույն գլխավոր հրամանատարության ներկայացուցիչ, Սովետական Միության մարշալ Կ. Վորոշիլովը, որը այդ ժամանակ գտնվում էր Կերչում, այսպես է գնահատել 89-րդ դիվիզիայի մարտական գործողությունները. «Ես դիտել եմ հայկական դիվիզիայի մղած մարտերը Կերչ քաղաքի ազատագրման համար։ Դիվիզիան մարտ վարելու լավագույն ձևեր և հերոսական օրինակ ցույց տվեց»։

Մոտենում էր Ղրիմում ընդհանուր հարձակման օրը։ Ապրիլի 7-ին և 8-ին ուկրաինական IV ռազմաճակատի զորքերը սկսել էին գրոհը և ճեղքել թշնամու պաշտպանությունը Պերեկոպի ու Սիվաշի շրջանում։ Կերչի կողմից գրոհի էին պատրաստվել Առանձին Մերձծովյան բանակի զորամասերը։ Այդ գրոհը սկսվեց ապրիլի 11-ի վաղ առավոտյան և պսակվեց մեծ հաջողությամբ։ Ջախջախելով հակառակորդի դիմադրությունը, մեր զորքերը ազատագրեցին Կերչը և սկսեցին հետապնդել նահանջող թշնամուն։ Թշնամուն հետապնդող առաջավոր դիվիզիաների շարքերում էր նաև 89-րդ դիվիզիան, որը Կերչի ազատագրման մարտերում ցուցաբերած քաջագործությունների համար ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1944 թ. ապրիլի 24-ի հրամանագրով պարգևատրվեց Կարմիր աստղի շքանշանով։ Այդ գնահատականը ավելի բարձրացրեց դիվիզիայի անձնակազմի մարտական-հարձակողական թափը։

Հետապնդելով նահանջող հակառակորդին և ազատագրելով տասնյակ բնակավայրեր, մայիսի առաջին օրերին ռազմաճակատի մյուս զորամասերի հետ միասին դիվիզիան արդեն մարտերի մեջ էր մտել Սևաստոպոլի ազատագրման, Ղրիմն ամբողջությամբ թշնամուց մաքրելու համար։ Այդ օրերին Ղրիմ եկավ Լենինականի աշխատավորության պատվիրակությունը, որի անդամները, լինելով դիվիզիայի զորամասերում, ռազմիկներին պատմում էին թիկունքում ձեռք բերած հաջողությունների մասին։ Պատվիրակությունը իր հետ բերել էր մեծ քանակությամբ նվեր-ծանրոցներ։ Լենինականի աշխատավորությանն ուղղած իրենց պատասխան նամակում դիվիզիայի ռազմիկները գրեցին. «Քաջարի կարմիր բանակի զորամասերի հետ միասին մենք ևս կշարունակենք ոչնչացնել ու հալածել թշնամուն մինչև իր որջը, մինչև բուն Գերմանիա և այնտեղ վերջնականապես կջախջախենք վիրավոր գազանին»։

Սևաստոպոլի համար մղած հերոսամարտերում դիվիզիան գործում էր III լեռնա-հրաձգային կորպուսի կազմում։ Մարտական դիրքեր գրավելով Բալակլավայի շրջանում, նա խնդիր էր ստացել պատրաստվել հարձակման Գորնայա լեռան ուղղությամբ։ Մայիսի 7-ին ամբողջ ռազմաճակատով սկսվեց Սևաստոպոլի ահեղ գրոհը։ Մոբիլիզացնելով վերջին ուժերը, թշնամին կատա-

զարար դիմադրում էր։ Բայց նրան փրկություն չկար։ Կարմիր բանակի զորքերը ծանր մարտերով և հաղթական առաջ էին շարժվում, մեկուսացված թշնամուն սեղմելով ծովին։ Թշնամու վրա գրոհում էր նաև գեներալ-մայոր Ն. Սաֆարյանի հրամանատարությամբ գործող հայկական դիվիզիան։ Երրորդ կորպուսի 318-րդ և 242-րդ դիվիզիաները, ճեղքելով թշնամու պաշտպանության առաջին գիծը, դժվարանում էին առաջ ընթանալ։ Նրանց օգնելու համար կորպուսի հրամանատարությունը գործողության մեջ մտցրեց 89-րդ դիվիզիան։ Կորպուսի հրամանատար, այժմ բանակի գեներալ Ա. Լուչինսկին այդ մասին գրել է. «Հրետանու և գվարդիական ծանր ականանետների կարճատև համազարկերից հետո հայկական հրաձգային դիվիզիայի 526-րդ և 390-րդ գնդերը երեկոյան ժամը 18-ին անցան գրոհի և սկսեցին արագորեն բարձրանալ Գորնայա բարձունքի հարավ-արևելյան ստորոտը»։ Այնուհետև նա նշում է, որ դրանով ամբողջ ռազմաճակատում մարտերը բռնկվեցին նոր, ավելի մեծ կատաղությամբ, «...հայկական դիվիզիայի զինվորների ու սպաների բացառիկ հերոսության և նրա հրամանատար գեներալ-մայոր Ն. Ռ. Սաֆարյանի կայունության շնորհիվ օրվա վերջին դիվիզիային հաջողվեց տիրանալ գերեզմանոցին» («Военно-исторический журнал», 1964, № 5, էջ 25—26)։

Երկօրյա ծանր մարտերի ընթացքում դիվիզիան գրավեց Գորնայա լեռը, որը հանդիսանում էր Սևաստոպոլի բանալին։ Այս մարտերում ևս դիվիզիայի ռազմիկները ցուցաբերեցին մասսայական հերոսության բազմաթիվ օրինակներ։ Վաշտի հրամանատար ավագ լեյտենանտ Ս. Բաղդասարյանը, գնկավարելով գրոհող ջոկատը, համարձակ կերպով նրան առաջ տարավ թշնամու դեմ, մեծ հաջողությամբ կատարեց մարտական խնդիրը, գերեց բազմաթիվ ֆաշիստների։ Ավագ սերժանտ Ա. Հարությունյանի դասակը համարձակ և սրընթաց գրոհով անցավ հակառակորդի թիկունքը, ոչնչացրեց նրա մի շարք կրակակետերը, ապահովեց մեր ստորաբաժանումների առաջընթացը՝ առանց մեծ կորուստների։ Գորնայա լեռան գրոհի ժամանակ հերոսական սխրանքներ կատարեցին նաև լեյտենանտ Խ. Խաչատրյանը, ավագ սերժանտներ Հ. Մկրտչյանը, Վ. Ռոստոմյանը, Ա. Քոչարյանը, ավագ Պ. Սարգսյանը, ավագ լեյտենանտ Վ. Պողոսյանը, Վ. Սողոմոնյանը և շատ ուրիշներ։ Հերոսաբար էին պայքարում փոխգնդապետ Ե. Կարապետյանի, փոխգնդապետ Գլուխոդեդովի, փոխգնդապետ Ջ. Բարայանի գնկավարած գնդերը, դիվիզիայի հրետանավորները և ականաձիգները, կապիտան Հ. Սիմոնյանի, մայոր Հ. Բարայանի, մայոր Ս. Մարգարովի, կապիտան Գ. Արրահամյանի գումարտակները։

Մայիսի 10-ին կարմիր բանակը ազատագրեց Սևաստոպոլը, իսկ 12-ին՝ Խերսոնես թերակղզին, որտեղ գործում էր նաև 89-րդ դիվիզիան։ Այստեղ թամանյան դիվիզիան գերեց ավելի քան 3000 ֆաշիստական զինվոր և սպա, գրավեց մեծ քանակությամբ ռազմական ավար։ Սևաստոպոլի ազատագրության համար մղված մարտերում հայ ժողովրդի զավակների քաջագործությունները բարձր գնահատվեցին. դիվիզիան պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով, իսկ նրա 390-րդ և 400-րդ գնդերը ստացան Սևաստոպոլյան կոչում։ Հարյուրավոր ռազմիկներ արժանացան կառավարական շքանշանների և մեդալների։ Դիվիզիայի հինգ ռազմիկներ՝ ավագ լեյտենանտ Ս. Բաղդասարյանը, լեյտենանտ Խ. Խաչատրյանը, ավագ սերժանտներ Ա. Հարությունյանը, Հ. Մկրտչյանը և Հ. Ռոստոմյանն արժանացան Սովետական Միության հերոսի

բարձր կոչման։ Սևաստոպոլի ազատագրումով ռազմաճակատը Ղրիմից հեռացավ մի քանի հարյուր կիլոմետրով։

Մինչև 1944 թ. օգոստոսը Թամանյան դիվիզիան մնաց Ղրիմում։ Այդ ժամանակ կարմիր բանակն արդեն հիմնականում ազատագրել էր սովետական հողը, որոշ ռազմաճակատների զորքերը անցել էին սովետական պետական սահմանը և եղբայրական օգնության ձեռք էին մեկնել ֆաշիզմի լծից իրենց ազատագրության համար պայքարի դուրս եկած Բուլղարիայի, Ռումինիայի, Հունգարիայի, Չեխոսլովակիայի, Լեհաստանի և Հարավսլավիայի ժողովուրդներին։

Օգոստոս-սեպտեմբերին Թամանյան դիվիզիան Ղրիմից փոխադրվեց 1 բելոռուսական ռազմաճակատ՝ նախ Բրեստի, ապա լեհական Լյուբլին քաղաքի մոտ գրավելով իր բնագծերը։ Մինչև 1945 թ. սկիզբը մնալով այստեղ, նա պատրաստվում էր նոր մարտերի։ Այդ մարտերը սկսվեցին հունվարի 12-ից, երբ ամբողջ սովետա-գերմանական ռազմաճակատի լայնությամբ կարմիր բանակը անցավ վիթխարի հարձակման։ Վիսլայի ձախ ափի պլացդարմներից սկսելով հարձակումը, ռազմաճակատի զորքերը ճեղքեցին թշնամու պաշտպանության ամուր պատնեշները, մեծ արագությամբ շարժվեցին դեպի արևմուտք՝ ազատագրելով լեհական քաղաքներն ու գյուղերը, միլիոնավոր լեհական ու սովետական քաղաքացիների։

Դեռևս հարձակման նախօրյակին Թամանյան դիվիզիան իր ամբողջ կազմով փոխադրվել էր Ռադոմ քաղաքի մոտ եղած պլացդարմը։ Այստեղից մասնակցելով հարձակմանը, ռազմաճակատի մյուս զորամասերի հետ միասին նա արագությամբ առաջ էր շարժվում։ Հանգիստ չտալով իր հատվածում գործող հակառակորդի զորքերին, ձմեռային դժվարին պայմաններում դիվիզիան օրական անցնում էր 40—50 կիլոմետր, շատ հաճախ ընթացքից մարտի բռնվելով նահանջող թշնամու զորքերի հետ։ Ռուսկի Պրուտ բնակավայրի մոտ այդպիսի մարտերից մեկի ժամանակ զոհվեց հայ ժողովրդի քաջարի զավակ, դիվիզիայի հրամանատարի տեղակալ գնդապետ Ռ. Բլբուլյանը, ծանր վիրավորվեցին 390-րդ գնդի հրամանատար գնդապետ Ե. Կարապետյանը և նրա տեղակալ փոխգնդապետ Ռևվազովը։

Ազատագրելով տասնյակ բնակավայրեր, Թամանյան դիվիզիան փետրվարի 6-ին արդեն անցել էր Օդերը և Ռամպիտց բնակավայրի մոտ պլացդարմ գրավել գետի ձախ ափին։ Փետրվարի 15-ին դիվիզիան այստեղից փոխադրվեց Օդերի Ֆրանկֆուրտ քաղաքի շրջակայքը և նրանից 3 կմ հարավ գտնվող պլացդարմում փոխարինեց մեր գվարդիական դիվիզիաներից մեկին, որը մեծ կորուստներ էր ունեցել։ Երկու ամիս, մինչև մեր զորքերի գլխավոր հարձակումը, Թամանյան դիվիզիան այդ պլացդարմը պահեց իր ձեռքում, այն դարձնելով մեր հարձակման կարևորագույն հենակետերից մեկը։ Պլացդարմը փոքր էր և խիստ ճահճոտ։ Ճակատով նա մոտ 2,5 կիլոմետր էր, խորությամբ՝ 700—800 մետր։ Որոշ տեղերում թշնամու խրամատների հեռավորությունը մեր դիրքերից միայն 50—60 մետր էր։ Մեր ռազմիկների ամեն մի շարժում թշնամու կրակակետերի, հատկապես սնայպերների հսկողության տակ էր։ Այդ պատճառով էլ պլացդարմում ռազմիկների անհրաժեշտ շարժումները և ռազմամթերքի ու սննդի փոխադրումները կատարվում էին գլխավորապես գիշերը։ Դա մեծ վտանգների և կորուստների հետ էր կապված, որովհետև թշնամու հրետանին և ականանետները անընդհատ կրակի տակ էին պահում գետի անցումները։

Դիվիզիայի միայն որոշ զորամասերն էին մարտական դիրքեր գրավել պլացդարմում, իսկ մյուս մասերը, հատկապես միջին և ծանր հրետանին ու ականանետները, գտնվում էին գետի աջ ափին և մարտական վիճակում միշտ պատրաստ էին կրակի՝ պլացդարմի պաշտպանության համար։ Երկու ամսվա ընթացքում թշնամին բազմիցս գրոհեց «հայկական փոքրիկ հողը» (ռազմաճակատում այդպես էին անվանում այդ պլացդարմը) հետ վերցնելու և այնտեղ գտնվող զորամասերը ոչնչացնելու համար, բայց միշտ էլ հանդիպելով հերոսական դիմադրության և տալով մեծ կորուստներ, հետ էր շպրտվում։ Օդերի պլացդարմում մղած հերոսամարտերում Թամանյան դիվիզիան մեծ շափով հարստացրեց իր մարտական տրադիցիաները։ Իրենց քաջագործություններով աչքի ընկան շատ զորամասեր և հազարավոր ռազմիկներ, որոնք պարգևատրվեցին կառավարական շքանշաններով ու մեդալներով։

Ապրիլի 16-ի վաղ առավոտյան մեր զորքերը սկսեցին վճռական գրոհը դեպի Բեռլին։ Առաջին բելոռուսական ռազմաճակատի մոտ 20 հազար հրանոթներն ու ականանետները մրրկային կրակ թափեցին թշնամու դիրքերի վրա։ Այդ կրակի տակ առաջ էին շարժվում 3000-ից ավելի սովետական տանկեր։ Թշնամու մոտակա և հեռավոր դիրքերն անընդմեջ ռմբակոծում էին հազարավոր ինքնաթիռներ։ Կրակի, ծխի ու փոշու մեջ համարյա ոչինչ չէր երևվում հակառակորդի կողմում։ Չնայած այդպիսի կործանիչ կրակին, գործադրելով վերջին ռիգերը, թշնամին գիմադրում էր, չէր նահանջում։ Սկսելով գրոհը, մեր զորամասերը առաջ էին ընթանում կոտրելով հակառակորդի կատաղի դիմադրությունը։ Թամանյան դիվիզիային խնդիր էր տրված շրջանցել Ֆրանկֆուրտը և մասնակցել նրա գրավմանը։ Չնայած ռազմաճակատի զորքերի դրլխավոր ուժերը թևերից շրջանցել էին այդ քաղաքը և հասել Բեռլինի մատույցներին, Ֆրանկֆուրտի կայազորը ուժեղ դիմադրություն էր ցույց տալիս և չէր ուզում հանձնել քաղաքը։ Մոտ մեկ շաբաթ տեղի ունեցան բազմաթիվ ճակատամարտեր, որոնց ակտիվ կերպով մասնակցեց 89-րդ դիվիզիան։ Ապրիլի 23-ին Ֆրանկֆուրտն ընկավ։

Թամանյան դիվիզիան խնդիր ստացավ արագորեն շարժվել դեպի Բեռլին։ Քաղաքի հյուսիս-արևելյան մասում նա մտավ գեներալ-գնդապետ Վ. Ի. Կուզնեցովի հրամանատարությամբ գործող III հարվածային բանակի կազմի մեջ։ Դիվիզիայի ու նրա ռազմիկների պատասխանատվությունն ավելի էր մեծանում մանավանդ այն պատճառով, որ Բեռլինը գրոհող կարմիր բանակի բազմաթիվ դիվիզիաների կազմում նա միակ ազգային դիվիզիան էր։

Ապրիլի 29-ին հայկական դիվիզիան մտավ մարտերի մեջ՝ Վեդդինգ և Մյունիգեն-Օստ շրջաններում։ Երկօրյա փողոցային դժվարին մարտերի ընթացքում դիվիզիայի զորամասերը տուն առ տուն, փողոց առ փողոց առաջ էին շարժվում։ Նրանք գրավեցին 7 թաղամաս, հակառակորդին պատճառելով մարդկային ու նյութական մեծ կորուստներ։ Դրանից հետո դիվիզիան խնդիր ստացավ մայիսի 1-ին գրոհել Հումբոլդ-Հայն այգում գտնվող երկու ամրոցների վրա և գրավել դրանք։ Այդ ամրոցները տեխնիկայի ժամանակակից խոսքով կառուցված պաշտպանական հզոր կետեր էին, որոնց երկաթ-բետոնե պատերի հաստությունը կազմում էր 4—5 մետր։ Ինչպես հետո պարզվեց, նրանցում տեղավորված էր 6000-անոց կայազոր և կային մեծ թվով բարձրաստիճան ֆաշիստական գործիչներ։

Սկսվեց Թամանյան գնդերի և գումարտակների գրոհը այդ ամրոցների վրա։ Դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանի մտածված հրամանների շնորհիվ հարձակվող զորամասերը շեշտակի հարվածներ էին հասցնում թշնամուն։ Մեծ ակտիվությամբ էին մարտնչում գնդապետ Ուլանովսկու և գնդապետ Ն. Կարապետյանի գնդերը, մայոր Հ. Բաբայանի, մայոր Բաղալովի, մայոր Հ. Սիմոնյանի, կապիտան Մ. Բաբլոյանի գումարտակները և դիվիզիայի հրետանավորներն ու ականաձիգները։

Բեռլինի գրավման մարտերում ցուցաբերած սխրանքների համար 89-րդ հայկական Թամանյան դիվիզիան ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1945 թ. մայիսի 28-ի հրամանագրով պարգևատրվեց Կուտուզովի II աստիճանի շքանշանով, դառնալով եռակի շքանշանակիր դիվիզիա։ Նրա հազարավոր ռազմիկների կրծքերը զարդարվեցին մարտական նորանոր շքանշաններով ու մեդալներով։ Գումարտակի հրամանատար Հ. Բաբայանն արժանացավ Սովետական Միության հերոսի կոչման։ Դրանով դիվիզիայի շարքերում աճած Սովետական Միության հերոսների թիվը հասավ 9-ի։

Բեռլինի գրավումից հետո, առանց դադարի, ռազմաճակատի մյուս զորամասերի հետ միասին Թամանյան դիվիզիան շարժվեց դեպի արևմուտք և մեր մեծ հաղթանակի օրը՝ մայիսի 9-ը դիմավորեց հեռավոր Էլբայի ափերին։ Այնտեղից նա իր մայր ժողովրդին նամակ-զեկուցագիր ուղարկեց, որի տակ ստորագրել էր դիվիզիայի ամբողջ անձնակազմը։ Նամակում ասված էր. «Դուք պահանջում էիք մեզանից անվախ առաջ գնալ, կանգ չառնել ոչ մի դժվարության առջև, համարձակորեն խորտակել ֆաշիստական բոլոր ամրությունները, ջախջախել թշնամու տեխնիկան և կենդանի ուժը։ Մենք հողին հավասարեցրինք մեր ճանապարհին ընկած բոլոր արգելքները· խորտակեցինք թշնամու զորեղ ամրությունները Թամանի կռիվներում, Կերչ, Սևաստոպոլ քաղաքների համար մղված համառ մարտերում, փառապանծ ուղի անցանք Վիսլայից մինչև Օդեր, գրոհեցինք հակառակորդի վերջին ամրությունները Օդերի Ֆրանկֆուրտում և հենց Գերմանիայի մայրաքաղաք Բեռլինում»։

Այնուհետև նամակում ամփոփված են պատերազմի ընթացքում դիվիզիայի մարտական գործողությունների հիմնական արդյունքները։ Կովկասից մինչև Էլբայի ափերը անցնելով սխրանքներով լի 3700 կմ փառավոր ուղի, դիվիզիան ազատագրել էր 900 բնակավայր, այդ թվում Մալգոբեկ, Թաման, Կոշմին, Դլուտով, Կորշով քաղաքները, մասնակցել Նովոռոսիյսկ, Կերչ, Սևաստոպոլ քաղաքների ազատագրմանը։ Պատերազմի ընթացքում դիվիզիան ոչնչացրել էր թշնամու ավելի քան 9000 զինվոր ու սպա, շարքից հանել ֆաշիստական 148 տանկ և ինքնագնաց հրանոթ, ավելի քան 300 դաշտային հրանոթ, գերել էր 11 հազար զինվոր ու սպա, որպես ռազմական ավար վերցրել էր տարբեր տրամաչափի 154 հրանոթ, 983 գնդացիր, 5600 հրացան, 1160 ավտոմեքենա և այլն։ Մարտերում ցուցաբերած արիության և խիզախության համար դիվիզիայի ռազմիկներից 7333 մարդ պարգևատրվեց մարտական շքանշաններով ու մեդալներով, ըստ որում դրանց մեծ մասը՝ մի քանի շքանշանով ու մեդալով։

Այսպիսի մարտական ուղի է անցել եռակի շքանշանակիր 89-րդ հայկական Թամանյան դիվիզիան։ Սակայն այդ ուղին հեշտ ու հանգիստ չի եղել։ Նա կապված է եղել բազմաթիվ դժվարությունների ու ծանր մարտերի հետ։ Այդ մարտերում մեծ վնասներ պատճառելով հակառակորդին, Թամանյան դի-

վիզիան ևս ունեցել է կորուստներ։ Հանուն մեր մեծ հաղթանակի հերոսաբար իրենց կյանքը զոհաբերել են հայ ժողովրդի շատ զավակներ։ Դրանց թվում են գնդապետներ Ա. Վասիլյանը, Գ. Բլբուլյանը, մայորներ Իսախանյանը, Մ. Խաչանյանը. Պ. Ավալյանը, Ս. Մարգարովը, Ս. Խանջյանը, Ս. Բաղդասարյանը, կապիտաններ Ա. Հովհաննիսյանը, Ռ. Ջոհրաբյանը, Հ. Աղաջանովը, Սովետական Միության հերոսներ, ավագ սերժանտներ Հ. Ավետիսյանը, Ս. Առաքելյանը, Ջ. Կարախանյանը և շատ ուրիշներ, որոնց միշտ կհիշի երախտապարտ հայ ժողովուրդը։

БОЕВОЙ ПУТЬ АРМЯНСКОЙ ТАМАНСКОЙ ДИВИЗИИ

Доктор истор. наук А. М. АКОПЯН

(Резюме)

Вместе со всем советским народом активное участие в Великой Отечественной войне против немецко-фашистских захватчиков принял и армянский народ. На фронтах народной войны сражались пять армянских национальных дивизий. Кроме того, десятки тысяч воинов-армян сражались против врага в составе других соединений. Героическую работу выполняли труженики тыла. За проявленные в боях подвиги 96 воинов-армян были удостоены высокого звания Героя Советского Союза, 70 тысяч воинов были награждены боевыми орденами и медалями, а 376 тысяч тружеников тыла — медалями «За оборону Кавказа» и «За трудовую доблесть в Великой Отечественной войне 1941—1945 гг.».

В борьбе против врага героические подвиги совершила трижды орденоносная 89-я армянская стрелковая Таманская дивизия, которая под командованием генерал-майора Нвера Сафаряна прошла славный боевой путь от предгорий Кавказа до Берлина и Эльбы. В героических сражениях с врагом она освободила 900 населенных пунктов (в том числе города Малгобек, Тамань, Кошмин, Длутов, Коршов), участвовала в освобождении Новороссийска, Керчи, Севастополя и в штурме Берлина.

В течение войны 89-я дивизия уничтожила более 9 тысяч и захватила в плен 11 тысяч вражеских солдат и офицеров, вывела из строя более 148 танков и самоходных орудий, 300 полевых орудий, захватила большое количество трофеев. За мужество и доблесть, проявленные в боях, 9 воинов дивизии были удостоены высокого звания Героя Советского Союза, 7333 человека получили боевые награды и медали; многие из них удостоились орденов и медалей по нескольку раз. В героических боях за освобождение Тамани 89-я дивизия получила звание Таманской, за освобождение Керчи была награждена орденом «Красной Звезды», за освобождение Севастополя — орденом «Красного Знамени», за штурм Берлина — орденом Кутузова II степени.